

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ  
13 մայիսի, 2020 N 18

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 4  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ և 5-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Արցախի Հանրապետության պարետի 2020 թվականի ապրիլի 13-ի «Մամուլի հետ կապերի պատասխանատու նշանակելու մասին» N 4 որոշման՝

1) 1-ին կետում «Արցախի Հանրապետության Նախագահի խորհրդական Տիգրան Աբրահամյանը (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Սամվել Բալայանը» բառերով.

2) 2-րդ կետում «Տիգրան Աբրահամյանին» բառերը փոխարինել «Սամվել Բալայանին» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ